№ 170 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6 1902 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕԳՈՍՏՈՍԻ 6 № 170

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԱՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկաթուղիական գծեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարգարինի հարցը. Դէպի Արարատ. Նամակ Վերին-Ագուլիսից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Գերմանիայից. Նամակ Բոլգարիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում.

ԵՐԿԱԹՈՒՂԻԱԿԱՆ ԳԾԵՐ

Անդրկովկասում ներկայումս ձեռնարկված են երկու երկաթուղիական գծեր, որոնցից մէկը պէտք է սնցնէ Արաքսի աւազանով և մօտեցնէ մեզ Պարսկաստանին, իսկ միւսը պէտք է անցնէ Սև Ծովի արեւելեան ափերին զուգընթաց և միացնէ Նովոռոսիյսկի ճիւղը Անդրկովկասեան երկաթուղու հետ։ Երկու գծերն էլ շատ կարևոր գծեր են և կունենան մեծ արտասական նշանակութիւն մեր երկրի համար։

Արաքսի աւազանը մեր երկրի ամենակուլտուրական տեղերից մէկն է։ Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուրի և Նախիջևանի գաւառներում վաղուց մշակվում են բարձր արժէք ունեցող բոյսեր, ինչպէս է օրինակ բամբակը, մրգատու ծառեր, խաղողի այգիներ և խոտաբոյսեր։ Հողը այնտեղ թանգ է և երկրագործութիւնը համեմատաբար ծաղկած վիճակի մէջ է։ Երկրագործը այնտեղ աշխատում է կարելին չափ շատ արդիւնք դուրս բերել իր հողաբաժնից և մշակում է նրան մեծ հոգատարութեամբ։ Երկաթուղին կը այ կարողութիւն ձեռնտու պայմաններով վաճառահանել երկրի բերքը և յարմարեցնել արդիւնաբերութիւնը վաճառանոցի պահանջների հետ։ Պարսկաստանը, որ կազմում է մեր երկրի շարունակութիւնը, կօգվի երկաթուղուց և կը սկսէ մեր երկրի միջոցով թէ իր արդիւնքները արտահանել դէպի մեծ վաճառանոցները և թէ ստանալ գործարանական ապրանքներ իր գործածութեան համար։ Երկաթուղին կազդէ Պարսկաստանի վրա և քաղաքակրթական կերպով, ուժեղացնելով նրա շրփումը և յարաբերութիւնները Եւրոպայի հետ, ընտելացնելով նրան կեանքի նոր պահանջներին և ստիպելով, որ նա մտցնէ իր ժողովրդի մէջ նոր վարչական կարգեր և հասարակական յարաբերութիւններ։

Սև Ծովի ափին զուգընթաց շինված երկաթուղին կը միացնէ Անդրկովկասը Եւրոպական Ռուսաստանի հետ։ Այժմ մենք ունենք մի գիծ, որ կապում է մեզ Հիւսիսի հետ, դա Բալաշովի կայարանից դէպի Բեսլան տանող Ճանապարհն է։ Այդ գծի բացումը մեծ զարկ տուաց Անդրկովկասի և Հիւսիսի յարաբերութիւնների զարգացմանը։ Նոյն նպատակին կը ծառայէ և Սև ծովեան գիծը։ Մէկ գիծը արևելքից, միւսը արևմուտքից մեզ մօտեցնում են Եւրոպական Ռուսաստանին և առհասարակ Եւրոպային, տալով կարողութիւն մեր ազգաբնակութեանը ընդարձակելու իր թէ առևտրական և թէ քաղաքակրթական յարաբերութիւնները դրսի աշխարհի հետ։

Կովկասի համար, որ դարեր շարունակ փակված և մեկուսացած կեանք էր վարել, որ վատ հաղորդակցութեան պատճառով չափազանց ոգմել և սահմանափակել էր իր յարաբերութիւնները ուրիշ ազգերի հետ, երկաթուղիական խիտ ցանցերի հիմնարկութիւնը մի բարիք է, որից խելացի կերպով օգտվելու համար, սակայն, անհրաժեշտ է աչալուրջ վերաբերմունք և կուլտուրական եռանդուն գործունէութիւն։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՐԳԱՐԻՆԻ ՀԱՐՑԸ

Այն օրից, երբ Մէժ-Մուրիէն (Mége-Mouriés) ցոյց տուեց մարգարին պատրաստելու եղանակը՝ չտերը՝ օգտվելով այդ նոր մթերքի եւ իսկական իւղի համասեռ յատկութիւններից՝ սկսեցին նրան ոչ միայն խառնել կովի իւղի հետ, այլ շատ անգամ ներկելով իսկական իւղի տեղ վաճառել։ Նկատենք այստեղ, որ մաքուր մարգարինը պատրաստում են գլխաւորապէս կովի կամ ոչխարի թարմ ճարպի ընտիր մասերից՝ հալեցնելով եւ նրանից ստէարինը ամենաւին հեռացնելով. այսպէս էր պատրաստում Մէժ-Մուրիէն 1850 թ. եւ այսպէս խնամքով պատրաստած ճարպային իւղը վնասակար յատկութիւններ չունենալով հանդերձ՝ իր էժան գնի պատճառով չքաւոր դասակարգի համար օգտաւէտ սուրբրօգատ կարող է լինել։ Կեղծողները չը բաւականացան կովի իւղը մարգարինով կեղծելով, այլ սկսեցին հետզհետէ վատացնել այդ նոր մթերքի յատկութիւնը՝ ճարպից բոլոր ստէարինը չը հեռացնելով ու հնացած ճարպից պատրաստելով այն։

Պետութիւնները չեն արգելում ընտիր մարգարինի առեւտուրը, երբ նա իր իսկական անունի տակ է վաճառվում. օրէնքով պատժվում են միայն վատ տեսակի մարգարին վաճառողները, բայց մարգարինի խառնուրդը օրգանիզմի համար վնասակար չը լինելով՝ յանցաւորները պատժվում են որպէս սոսկ խաբեբաներ. թունաւոր խառնուրդների ներկայութիւնը յանցանքը ծանրացնում է։

Սակայն, ինչպէս որոշել մարգարինի ներկայութիւնը՝ օրինակ՝ թարմ կարագի մէջ։ Այս վերջինը իր մէջ պարունակում է երկու տեսակ թթուներ՝ հաստատուն եւ եթերային (acides fixes et volatils), որոնցից երկրորդը կազմում է 5%։ Այսպէս կարծում էին քիմիկոսները մինչեւ վերջին ժամանակները. եւ 5 տոկոսից պակաս չափով եթերային թթուներ պարունակող կարագը համարվում էր մարգարինախառն։

«Հսկող աչքը» սխալվել էր սակայն...

Մօտ երկու տարի առաջ հոլլանդացի կաթնատնտեսների եւ ֆրանսիական մաքսատան պաշտօնեաների մէջ ընդհարումն է տեղի ունենում, որի պատճառը որոշելու համար ֆրանսիական երկրագործութեան մինիստրութիւնը ուղարկում է երկու քիմիկոս՝ Բուսսօյին եւ Կուգենին։ Սրանք՝ յիրաւի հետազօտութիւններ կատարելով Հոլլանդիայի զանազան մասերում՝ հաստատեցին հոլլանդացի կաթնատնտեսների ասածը, թէ՝ յիրաւի տարվայ որոշ ժամանակներում զուտ կարագը կարող է 5 տոկոսից պակաս չափով եթերային թթուներ պարունակել. ուստի եւ այս բանը կարող է վերոյիշեալ հիմունքով անտեղի կերպով առիթ տալ կարծելու, թէ զուտ կարագը պարունակում է 30—40% մարգարին։ Բացի այդ՝ այս երկու քիմիկոսները հաւանական գտան այն ենթադրութիւնը, թէ եթերային թթուների քանակութեան պակասելը կախված է անասունի սնունդի վատութիւնից եւ հակառողջական պայմաններից եւս։

Բայց այս ենթադրութիւնը հարկաւոր է հաստատել փորձնականապէս։

Հոլլանդական կառավարութիւնը այդ պատճառով յանձնեց Գրոնինգի գիւղատնտեսական կայարանի կառավարիչ Sjollema-ին այդ ուղղութեամբ փորձեր անելու. փորձերն սկսվեցին 1901 թ. հոկտեմբերից եւ վերջացան այս տարվայ փետրվար ամսին։ Այդ փորձերի նկարագրութիւնը Sjollema ներկայացրել է նորերս Ամստերդամի գիտական ակադեմիային, եւ այդ նկարագրութեան ֆրանսերէն թարգմանութիւնը մասնագէտները կարող են գտնել Journal d'agriculture pratique շաբաթաթերթի այս տարվայ յունիսի 26-ի եւ յուլիսի 3-ի համարներում. մենք բաւականանում ենք այստեղ թարգմանչի՝ Գրանդոի մի այլ յօդուածից մի քանի տեղեկութիւններ տալով։

Կովերի դաշտային միակ սնունդին աւելացնելով շաքարաճակնդեղ (betterave sucriére) մենք երկու-երեք օրվայ մէջ կարագի եթերային թթուաների % կարող ենք հասցնել 5-ի. այստեղից էլ հետեւում է, թէ այն կարագը, որ ստացվում է դաշտային միջակ սնունդ ուտեցող կովերից, առանց մարգարին պարունակելու՝ կարող է ընդունվել 30—40% մարգարին պարունակող կեղծած կարագի տեղ։

Հարկաւոր էր սակայն որոշել, թէ շաքարաճակնդեղի բաղադրիչ մասերից ո՞րն է եթերային թթուաների քանակութեան աւելանալուն նպաստում։ Աւելացնելով իւրաքանչիւր կովի սնունդին նախ 400 գրամմ (9,4 մսխալ՝ մօտաւորապէս) շաքար եւ ապա այդ քանակութիւնը ժամանակի ընթացքում հասցնելով երկու կիլօի (4,9 ֆունտ) Sjollema-ին պիտի հնգաչափ տոկոս եթերային թթուաներ պարունակող կարագ ստանար։ Նկատենք, որ բարելաւած բէժիմի ենթակայ կովերի կարագը համեմատվում էր սովորական սնունդով օգտվող կովերի կարագի հետ։

Վերոյիշեալից հետեւում է, որ մինչեւ այժմ գոյութիւն ունեցող՝ կարագի մէջ մարգարինի ներկայութիւնը իբր թէ հաստատող յատկանիշը անհիմն էր, որի պատճառով էլ կարագի առեւտրի առաջ անգիտակցաբար արգելքներ էին դնում, դիպչելով շատ եւ շատ ազնիւ արդիւնաբերողների շահերին։

Կեղծելու առաջն ինչպէս առնել։

Կեղծելով, եթէ կարելի է այսպէս ասել.— պատասխանում է Բէլգիայում 1900 թ. հոկտեմբերի 1-ից գործող օրէնքը։ Բայց կեղծելով ոչ թէ իւղը, այլ մարգարինը։

Վաճառելու համար պատրաստվող մարգարինի հետ ֆաբրիկացիայի ժամանակ պիտի խառնել իւրաքանչիւր մի հազար մաս ճարպային նիւթի դէմ 50 մաս սէզամի ձէթ եւ մի մաս գետնախնձորի օղայ. այսպէս է սահմանում այդ օրէնքը։ Այդպիսի մի խառնուրդ այդ չափով ոչ վնասակար է օրգանիզմի համար եւ ոչ էլ դրանով մարգարինը փչանում կամ կորցնում է իր սննդարար յատկութիւնը. բայց միւս կողմից այդպիսի մարգարինի ամենափոքր քանակութեան ներկայութիւնը կարագի մէջ արդէն առանց քիմիական անալիզի կարելի է իմանալ՝ շնորհիւ այն քիմիական բաղադրութիւնների, որոնք ստացվում են այդ երկու նիւթերի փոխադարձ ազդեցութեամբ, շնորհիւ նրանց ռեակցիայի, ինչպէս քիմիկոսներն են ասում։

Սպասենք, որ այս սրամիտ միջոցը կենսունակ եւս լինի...

Գ. Տէր-Ղեւոնդեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ

(Ուղեւորի թռուցիկ տպաւորութիւններ)

XXV

Վատիկանի մուզէն մեծագոյնն է Հռոմում։ Անձանները այնքան բազմաթիւ են եւ այնպէս խիտ առ խիտ իրար կողքի շարված, որ այցելուն ինքն իրան կարծում է մի ամբոխի մէջ, կենդանի ամբոխի, եւ այդ պատրանքի հաճոյքն ստացին է։ Ամբողջ հեթանոս աշխարհն է այստեղ, բոլոր այն գլուխները, որոնք դօգման չը ճանաչեցին, ապրեցին, բանականութիւնն ուսնելով առաջնորդ եւ որոնց մօրալը երբէք հոգի չը խեղդեց։

Եւ այս հեթանոս աշխարհի, այս հին աստուածների, այս փիլիսոփաների մէջ փառաւորէն բազմել է ս. Պետրոսի տաճարը եւ պապիսով ստեղծվել է մի անօրինակ խառնուրդ, ուր հին կրօններն ու վարդապետութիւնները խճճվել են քրիստոնէութեան հետ։ Ամն է յաղթական, ոմն է ստորադասված, դա մի հարց է, որ զանազան ճաշակներ զանազան կերպ են վճռում. փաստ է սակայն՝ որ Ցուլիոս II եւ Լեւոն X՝ վերածնութեան այս երկու մեծ ախոյեանները աւելի շատ հեթանոս էստետիկներ, հին, դասական մտքի, դասական վարդապետութեան աշակերտներ էին, քան քրիստոնէական եկեղեցու պետեր։

Միայն ս. Պետրոսը չէ, որ իր տաճարն ունի Վատիկանի մօտ. դասական աստուածներից ամեն մէկը իրն ունի մուզէի այն մասում, որ կոչվում է «Բելվեդերի բակ»։ Չեմ կարող հաւատալ, թէ աշխարհի մի այլ մասում մի միւզէ ունենայ սրա նման մի բան։ Այդ բակը յիշեցնում է հռոմէական ազնուականների տան փոքրիկ պարտէզը։ Կենտրոնում մի փոքրիկ շատրուան անուշիկ կարկաչիւնով ցուրտ ջուր է ցայտում, այնքան մեղմ, այնքան զգոյշ, որ կարծես դա մրմունջն է այն հին ոգիների, որոնք կծկված են իրանց արձանների ետեւում։ Այս խաղաղիկ ու մելանխոլիկ պարտէզի շուրջը կամարակապ խցիկներում շարված են դասական աշխարհի տէրերը, Պարնասից հալածված աստուածները։ Այս միւզէի այցելութիւնը մի հրաշալի զբօսանք է. մարդ իսօում է աստուածների դիւթական լեզուն, ապրում է նրանց հետ եւ երազում է հին օրերը, երբ մարդն ու անմահները կազմում էին մի ընտանիք, մի եւ նոյն կրքերով, մի եւ նոյն յոյզերով էին ապրում, լալիս, ինդում, սգում ու զուարճանում։

Այստեղ է հռչակաւոր Ապոլլոն-Դը-Բելվեդերը, որ կատարելատիպն է ներկայացնում առնացի գեղեցկութեան այնպէս՝ ինչպէս այն ըմբռնում է հին յոյնը։ Մերկ ձեւերի կատարելութիւնը, միացած մի փոքր քնքոյշ առնացիութեան հետ, դիմադրերի արտայայտիչ ու վսեմ ներդաշնակութիւնը մարմնի ամբողջութեան հետ, դարձնում են այդ արձանը ընդհանուր հիացմունքի եւ գեղարուեստական բարձր հաճոյքի մի անապառ աղբիւր։ Մարդ նայում է մի անգամ, նայում է դարձեալ, մնում է ակնապիշ եւ չի կշտանում։ Զգում ես, որ մարմինն եւ նրա բնական յոյզերն ու կրքերը սրբագործող կրօնով սնված մի հեթանոս երեւակայութիւն կարող էր արտայրել մի այսպիսի գործ։ Երբ մի քրիստոնեայ արուեստագէտ իր գեղարուեստական գործերի մէջ հանի այսպիսի կատարելութեան, ինչպէս, օրինակ, մի Միքէլ Անջելո — նոր աշխարհի այս Ֆիդիասը, ապա վստահ կարելի է ասել, որ նա քրիստոնեայ հեթանոս է, որ նա սնված է այն գաղափարներով, այն հասկացողութիւններով, որոնցով սնված էր յոյն Ֆիդիասա կամ Պլատոն։

Այստեղ է Մերկուրը՝ աստուածների բանբեր հրեշտակը եւ մի եւ նոյն ժամանակ պերճախօսութեան, վաճառականութեան եւ գողերի աստուածը։ Զարմանալի են հին յոյներն իրանց սրամիտ ըմբռնողութեամբ։ Արեւելքի վաճառականութիւնը միշտ եղել է մի իսկական գողութիւն, իսկ լաւ խաբելու համար անհրաժեշտ է նաեւ լաւ խօսելու արուեստը ապրանքը գովելու, յաճախորդին շլացնելու համար. եւ եթէ սրա վրա աւելացնենք վաճառականների լուր տանել բերելու հեշտութիւնը, ահա քեզ Մերկուրի իդէան. նա մի հանճարեղ գող է, որովհետեւ պերճախօս վաճառական է։ Նա մտածկոտ է, ինչպէս հաշիւներով զբաղված մի առեւտրական, որի գործերը վատ չեն գընում եւ որ իր գործի աջողութեան եւ վատակի գիտակցութիւնն ունի։

Այստեղ է Պերսէն, Մեդուզայի գլուխը կախած ձեռքին՝ սպառնալից ու յաղթական։ Բայց անցնենք Լաօկօօնի արձանախումբը տեսնելու, որ հին աշխարհի գեղարուեստական հրաշալիքներից մէկն է։

Լաօկօօնի լեգենդան աստուածային վրէժխնդրութեան մի զարհուրելի օրինակ է։ Զարմանալի է, մարդկային միտքը դեռ երբէք չէ յղացել Աստուծոյ մի իդէա, որ պատկերացնէր բացարձակ բարութիւն, բացարձակ ողորմածութիւն։ Արամազդը իր շանթերն ունէր, միւս

ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ

(Նամակ Խմբագրութեան)

—

Այսօր, օգոստոսի 6-ին, Թիֆլիսի ինտելիգէնցայի մի քանի ներկայացուցիչներ, որոնց թւում եւ մի կին, մեկնում են դէպի Արարատի գագաթը՝ գիտնական նպատակով։ Մի տարի է, ինչ այդ խումբը ուսումնասիրում է ընդհանրապէս Արարատին եւ մասնաւորապէս նրա գագաթը բարձրանալու փորձերին վերաբերեալ գրականութիւնը։ Կիրակի՝ ամսոյ 4-ին, այդ խմբի անդամները,—Ա. Բ. Եւանգուլով, Վ. Ս. Մէլէնչուկ, Լ. Ե. Սարկիսով, Վ. Ա. Սօկոլով, Ն. Ն. Պրոստոսէրդցէվ, Լ. Լ, Շորէյխէր, Անանիէվ եւ տիկին Գուէբովա,—այցելեցին Թիֆլիսի ֆիզիքական դիտարանը եւ մանրամասն ծանօթացան մի քանի հետազօտական գործիքների հետ։ Նկատենք, որ ֆիզիքական դիտարանը, ինչպէս եւ Թիֆլիսի կայսերական աշխարհագրական ընկերութիւնները հէնց սկզբից մեծ համակրանքով վերաբերվեցին դէպի այս համարձակ քայլը՝ հոգալով առաջինը՝ շարժական դիտարանի եւ երկրորդը՝ գործիքների ծախսերը։ Այդ շարժական դիտարանը, որ կառուցվել է Թիֆլիսի ֆիզիքական դիտարանի կառավարչի—պ. Գլասէկի հսկողութեամբ, եւ գործիքները կը թողնվեն Արարատի գագաթի վրա ու այսպիսով կը ներկայացնեն ծովի մակերեւոյթից մօտ 17000 ֆուտ բարձրութեան վրա մի տեսակ մշտական դիտարան ապագայ ճանապարհորդների համար։ Խումբը յոյս ունի շրջակայ ազգաբնակութեան կողմից աջակցութիւն գտնելու։

Գ. Տէր-Ղեւոնդեան

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

—

Յուլիսի 28-ին

Գողթան աշխարհի համարեա բոլոր գիւղերը գտնվում են ձորերում, փոքրիկ գետակների ափերին։ Այդ գետակները իրանց սկիզբն առնում են բարձրաբերձ, լերկ, երբեմն ձիւնապատ լեռներում։ Անձրեւների ժամանակ առաջացած ջուրը այդ սարերից հոսելով՝ իր հետ բերում է քարերի եւ ցեխի մի մեծ քանակութիւն, որը հեղեղի պէս անցնելով մարդաբնակ ձորերով՝ մեծամեծ վնասներ է տալիս։ Ինքը, Ագուլիսը, շատ անգամ է այդ օրերը տեսել, տեսաւ եւ արանից մի 20 օր առաջ։

Յուլիսի 25-ին Բիստ եւ Փառակա հայաբնակ գիւղերում տեղաց սաստիկ անձրեւ (որտեղ եւ գտնվում էինք մենք)։ Անձրեւներից առաջացած ջուրը սրբեց բերեց իր հետ սարերի երկարատեւ չորութիւնից կիսված հողն ու աւազը։ Բիստի երկու գետակները, որոնք ընդարկում են միմեանց գիւղի ստորին մասում, գիւղը թողնելով սարի բարձրադիր լանջում, չնորհիւ այս բարեյաջող դիրքին՝ հեղեղները վնասներ հասցնել չը կարողացան։ Սակայն ջրի մեծ հոսանքը մի անզուսպ գազանի էր նմանում, որ մռնչալով, գոռգոռալով իր նեղ սալապատ ափերի մէջ առաջ էր գնում իր ահագին քարերի կըտորների հետ թաւալվելով...

Այլ տեսարանն էր ներկայացնում Փառական, ուր մենք հասանք հետեւեալ առաւօտեան, հեղեղից յետոյ։ Ես կը յայտնեմ միմիայն իմ տպաւորութիւնները, որ ստացայ մի քանի ժամ այնտեղ մնալով, մանրամասնութիւնները թողնելով ուրիշին։

Ճիշտ է, Փառակայի գետակի տաշտը նոյն բարեյաջող դիրքը չունի, ինչ որ Բիստինն է, բայց եւ այնպէս նա գժուութիւններ չէ սիրել, եւ դրան, որպէս ապացոյց, կարող ենք ցոյց տալ 320 տարվայ կամուրջը եւ հազարներով ափերին շարված բազմաղարեան, հաստաբուն ծառերը, որոնք իրանց սոսափիւնի մէջ «գնաց բարով» են մրմնջացել արծաթափրփուր ջրակաչուն կայլակներին։ Բայց այս անգամ Նախախնամութիւնը այլ կերպ էր տնօրինել։ Հեղեղը այս անգամ քշել տարել էր այս տեսակ ծառերից մի քանի հազարներ։ Ամայի էին գետի ափերը, ուր ամեն տեղ հեղեղը իր ծանր ցեխոտ թեւերն էին փռել, քարերի կոյտեր էր հաւաքել։ Իսկ մի քանի հարիւր ծառեր, զրկված կանաչ լինելու որ եւ է յատկութիւնից, իրանց ցեխակոլոր ճիւղերը գետին է փռել. դրանք հեղեղի աւերմունքների վկաներն էին, տխուր իրականութեան անձայն ողբացողները։ Ջը կայ եւ գետի 320 տարվայ մեծ, քարաշէն կամուրջը, որից միայն գետակի ափի ժայռի վրա մի քանի հատ քարերն են մնացել։ Հեղեղը տարել է եւ գիւղի առուները, որոնցից իւրաքանչիւրի նորոգութեան համար մի քանի հարիւր րուբլիներ են հարկաւոր։

Այս բոլորը գիւղացու համար շատ մեծ կորուստ է։ Շատ շատերի նիւթական կարողութեան միակ աղբիւրը՝ այգին, որի վրա գիշերցերեկ խնամք է տարել, արիւն-քրտինք է թափել, այսօր նա դրա տեղ տեսնում է քարերի կոյտեր, ցեխի վերմակ...

—Սա մի չը տեսնված կրակ է, սա Աստուծուց ուղարկած մի սոսկալի պատիժ է, կրկնում էին բոլորը։

Եւ դժբաղդ կանայք, սեւ թաշկինակները բռնած, այգիներում, քարերի կոյտերի վրա նստած՝ ողբում էին։ Բայց նրանց աչքերից լոկ արտասուքի կաթիլներ էին թափվում, այն ինչ նրանք հեղեղ էին խնդրում, որ իրանց էլ քշէր տանէր, որ միանգամայն ընդ միշտ հանգստանային...

Ընդհանուր վնասը 25,000 րուբլուց աւել էին հաշւում. իսկ մարդկային զոհերի մասին դեռ ոչինչ չէր յայտնի։

Մեծ վնասներ պիտի լինեն կրած Բլաւ եւ Բուհրուդ թուրքաբնակ գիւղերը, որոնց միջով անցնում էին Փառակայի եւ Բիստի հեղեղները։

Ագուլիսում լսեցինք, որ Աղու գիւղում հեղեղը ափն է գցել օրօրոցներ եւ այլ տնային իրեր. ուրեղից է հեղեղը աւար վերցրել դրանց, դեռ եւս յայտնի չէ։

Կ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

—

Պետրովսկ, օգոստոսի 4-ին

Անկեղծ շնորհակալութիւն եմ յայտնում այն բոլոր անձանց, որոնք պատուեցին ինձ շնորհաւորութիւններով օգոստոսի 3-ին՝ իմ անուանակոչութեան տօնի առիթով։

Արիստակէս Արքեպիսկոպոս Սեդրակեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ախալքալաք, յուլիսի 30-ին

Ամսիս 25-ին գաւառիս Բուղաշէն գիւղի ծխական քահանան բերելով ինձ մօտ տասներկու տարեկանի չափ մի հայ աղջիկ, յայտնեց թէ՝ իրանց գիւղացիները առել են դրան ճանապարհորդ Թուշերի ձեռքից եւ բերել յանձնել են իր խնամքին ու կարգադրութեանը։

Այս աղջկայ անունն է Հեղինէ եւ իրա ասելով՝ հօր անուն եւ ազգանունն է Գրիգոր Տէր Աւետիսեան, իսկ մօրը՝ Վարդուհի Սահակեան, որոնք գաղթելով Կարնից՝ մի ժամանակ ապրել են Կարս քաղաքում, ուր ծնվել է այս աղջիկը՝ Հեղինէն։ Նրանք ամբողջ ընտանիքով եկած են եղել Ախալքալաքի գաւառը եւ մի ժամանակ մնալով Դիլիճ գիւղում, այնտեղ ամուսնացրել են իրանց մեծ դստերը նոյն գիւղացի Գասպար Ալոյեանի հետ. իսկ սրանից երեք տարի առաջ թողել Դիլիճ գիւղը, ընտանիքով գնացել են Թիֆլիս եւ այնտեղ մնում են հացափորի բանտոր ս. Սարգիս եկեղեցու մօտերքը ապրող Թօփալ (կաղ) Կարապետ անունով մէկ պարոնի մօտ։

Հեղինէի ծնողները մօտ մի ամիս առաջ եկորների հետ վերադարձնում են նրան կրկին Ախալքալաքի Դիլիճ գիւղը, իր քրոջ եւ փեսայի տանը մնալու համար, սակայն փեսայի եղբայրները դժգոհ մնալով այս բանից, տրտնջում են իրանց եղբօր եւ Հեղինէի քրոջ դէմ։ Հեղինէն, տեսնելով իր մասին տեղի ունեցած անբաւականութիւնները, գաղտնի հեռանում է քրոջ տանից եւ ուղեւորվում մենակ ու ոտով դէպի Թիֆլիս իր ծնողների մօտ։

Անցնելով 30 վերստ տարածութեան ճանապարհ, հասնում է Արագօվա գիւղի սահմանը, ուր պատահում են նրան ամարանոց եկած երկու ձիաւոր Թուշեր, որոնք հակառակ աղջկայ կամքին վերցնում նստացնում են իրանց գաւակին՝ տանելու իրանց բինան (վրանները)։ Կօթելիա գիւղի մօտ, ճանապարհին, պատահում է Բուղաշէն գիւղացի մի հայ անցորդ, որը լսելով աղջկայ աղաղակն ու լացը՝ մի կերպ առնում է նրան Թուշերի ձեռքից եւ բերում յանձնում իրանց գիւղի ծխական քահանային եւ այս վերջինս, ինչպէս վերեւ ասացի, բերել յանձնել է ինձ։

Հեղինէի ծնողները թող բարեհաճեն իրանց ճիշդ հասցէն ուղարկել ինձ, որ ես ըստ այնմ կարողանամ իրանց գաւակին ապահով ուղարկել իրանց մօտ։ Հարկաւոր եմ համարում յայտնել եւ այս, թէ Ախալքալաքում մի երկու ազնիւ ընտանիքներ ուզում են Հեղինէին իրանց տների մէջ պահել իբրեւ աղախին, ի հարկէ կարգին կերակրելով ու հագցնելով. այն դէպքում, եթէ ծնողները յօժարեն, թող նոյնպէս բարեհաճեն հաղորդել ինձ իրանց հաճութիւնը։

Ընձակ վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսի ոստիկանապետը մի շրջաբերական հրամանով պատուիրեց պրիստաւներին՝ յայտնել բոլոր հայ գաղթականներին, որոնք մինչեւ այժմ չեն ընդունել ռուսահպատակութիւն, որ եթէ նրանք չեն ցանկանայ գնալ Թուրքիա կամ ազատ կամքով ընդունել ռուսահպատակութիւն մինչեւ այս օգոստոս ամսի 10-ը, այդ դէպքում կը համարվեն մեչչանների դասակարգի անդամ։ Սրա հետ միասին ոստիկանապետը առաջարկել է պրիստաւներին օգոստոսի 10-ին կազմել այդպիսի հայ գաղթականների անուանական ցուցակը։

—

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան օգտին ստացանք Բագուից, Կիրակոսեանից, 16 րուբլի, որ նուիրել են տեւեւալ անձինք. Մ. Կիրակոսեան, Ղ. Մ[illegible] Կարապետեան 2-ական ր., Ե. Տէր-Թում[illegible]նեան, Ի. Տէր-Թումանեան, Մ. Մարտիրոս[illegible] Գ. Զաքարեան, Ե. Հայրապետեան Ա. Օ. Կի[illegible]կոսեան, Տ. Ս. Կիրակոսեան, Ե. Կիրակ[illegible] 1-ական ր.։ Մ. Անեանց, Մ. Շահնազար[illegible] Գ. Ցովհաննիսեան, Ա. Զանոեան, Մ. Զա[illegible]ռեան, Ս. Մնացականեան, Ե. Մեծոյեան, [illegible] Հայրապետեան 50-ական կոպէկ։ Գումարը 16 րուբլի, որ նախկին ստացվածների հետ նում է 1353 րուբլի 8 կոպէկ։

—

Նաւթի գները չը բարձրացան այնքան, մեծ կենդանութիւն տային Ապշերոնեան թերակղզու գործերին, բայց չեն էլ ընկնում [illegible] ռաջվայ պէս։ Նաւթի գները տատանվում [illegible] 7½ եւ 8½ կոպէկ գների մէջ։ Այդ գներ[illegible]դեռ չէ կարելի գործի գցել բոլոր հանքերը, բայց նրանց նշանաւոր մասը արդէն կարող[illegible]նում է մասնաւոր շահով շարունակել արդ[illegible]նաբերութիւնը։

—

Այն մասնաժողովը, որ կազմված էր ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան [illegible] եւ որ զբաղված էր բարձրագոյն ուսումնարան[illegible]ներ մտնելու կանոնների քննութեամբ ու փ[illegible]փոխութեամբ, արդէն վերջացնում է իր [illegible]բաղմունքները։ Նոր կանոններով, որոնք պէտ[illegible] է գործադրվեն 1903 թւականի աշնանից, մ[illegible]դրութիւն կայ վերցնել մրցողական քննութիւ[illegible]ները եւ փոխարինել նրանց այն թւանշանն[illegible] մրցութեամբ, որ մտնել ցանկացողները ստա[illegible]ն միջնակարգ ուսումնարաններում։

—

Թիֆլիսի քաղաքային ուպրավայի առաջ[illegible]կած հարցին, թէ կարող է արդեօք տրամվ[illegible] բելգիական ընկերութիւնը տալ քաղաքին [illegible]լեքտրական ոյժ իր էլեքտրական ապագայ կ[illegible]յարանից եւ ինչ գնով—ընկերութեան գլխա[illegible] դիրեկտորը, շաբաթ, օգոստոսի 3-ին, պատ[illegible]խանեց ուպրավային, թէ ընկերութիւնը կար[illegible] է մատակարարել քաղաքին էլեքտրական [illegible]լուսաւորութեան եւ այլ նպատակների հա[illegible] միայն այն դէպքում, եթէ չինվի գիդրավլի[illegible]կան էլեքտրական կայարան եւ ոչ չոգեայ[illegible]որի վրա կանգ է առել ընկերութիւնը։ Գ[illegible]բրավլիական կայարանի չինութիւնը, որ պ[illegible]հանջում է ահագին ծախքեր, ընկերութի[illegible] պատրաստ է առնել իր վրա, եթէ քաղաքը [illegible] կողմից աջակցութիւն ցոյց կը տայ ընկեր[illegible]թեան՝ եթէ ոչ միանուագ ծախքեր անել[illegible] գոնէ մի քանի արտօնութիւններ տալով ի[illegible]կերութեան եւ որոշ փոփոխութիւններ մտցն[illegible]լով էլեքտրական տրամվայի չինութեան պ[illegible]մանների մէջ։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը ուղարկել է կովկասեան ուսումնական շրջանի վարչութեանը միջնակարգ ուսումնարաններում դասաւանդվող առարկանե[illegible] նոր ծրագիրը եւ առաջարկել է հոգ տանել մտցնելու յիշված ծրագիրը այս ուսումնարան[illegible]կան տարվայ սկզբից։

—

«Каспій» լրագիրը հաղորդում է, թէ [illegible]

աստուածութիւններից իւրաքանչիւրն իր տրամադրութեան տակ ունէր երկնքի եւ երկրի բոլոր չարագործ ոյժերը՝ պատժելու ողորմելի մահկանացուների չնչին յանցանքները անլուր պատիժներով։ Եհովան վրէժխնդիր էր, որպէս խանձված անապատների մի ցասկոտ իշխան։ Քրիստոնէութիւնն այդ բոլոր հին եւ նոր աստուածային վրէժխնդրութիւններից ու պատիժներից հիւսեց իր զարհուրելի դժոխքը, որ բարեբաղդաբար Դանտէն միայն երազող երեւակայութեամբ տեսաւ։ Հին եւ նոր սերունդները աստուածներին ամենաեսասէր հակումներ տալու մէջ իրարից յետ չեն մնայ։ Մարդը մարդու մէջ յաճախ է դթութիւն եւ ներողամտութիւն փնտրում կամ պահանջում գոնէ յանցանքի եւ պատժի մէջ որոշ համաչափութիւն. բայց երկինքն ու երկիրը բռնակալներով լցնող ստրուկ միտքը սասանվում է եւ համբերութեամբ է դիտում պատիժների եւ յանցանքների մէջ իշխող անարդար անհամաչափութիւնը, երբ դատաւորն իր իսկ ստեղծած մի աստուած է երկնային կամ երկրաւոր։

Շատ անգամ «ողորմած» աստուածների զայրոյթը տարածվում է նաեւ անմեղների վրա. Եհովան եօթ սերունդ էր պատժում հայրերի յանցանքի համար։ Ապօլլոն կոտորեց տասն եւ չորս անմեղ երեխաներ, որովհետեւ նրանց մայրը՝ Նիոբէն՝ հպարտ էր իր զաւակներով. ահա եւ Լաոկօօնի օրինակը, երկնքի անարդարութեան մի վրդովեցուցիչ փաստ։ Պրիամոսի եւ Հեկուբայի որդի Լաոկօօնը քուրմ է Տրոադայ։ Ապօլլոնին։ Այս աստուածը մի չնչին առիթով դժգոհ է իր ծառայից եւ իբրեւ պատիժ երկու ահագին օձեր է ուղարկում եւ նրան իր երկու որդիների հետ խեղդում։ Ահա այս երկնային վրէժխնդրութեան լեգենդան է, որ հանճարեղ արձանագործը պատկերացրել է մի աքանչելի արձանուխմբով։

Երկու հսկայական օձեր իրանց երկաթէ օղակների մէջ բռնել են հօրը երկու որդիների հետ եւ այնպէս են խճճվել նրանց բազուկների եւ ոտների մէջ, որ այլ եւս շարժվելու, փրկութեան ոչ մի հնար չը կայ։ Երկու որդիներից մէկը բոլորովին մանուկ է, միւսը՝ պատանի է, իսկ հայրը՝ մի պատկառելի ծերունի։ Փոքր որդին, որի կողքին կպել է զզուելի սողունը իր ահագին երախով, ցաւի մի աննկարագրելի արտայայտութեամբ աջ ձեռքը դրել է օձի տափակ գլխին եւ կարծես փորձում է դուրս քաշել իր մսի մէջ նրա թունալից ատամները։ Այդ փորձն անզօր է նրան փրկել եւ մանուկը բերանը կիսաբաց, աչքերը խուփ, մարում է եւ քաշ ընկնում օձի օղակների մէջ։ Միւս որդին, որի ձախ ոտքը եւ աջ ձեռքն են գալարների մէջ բռնված, բարձրացրել է միւս ձեռքը, անհնարին սարսափով նայում է հօրը եւ կարծես վերջին վայրկենին իր եղերական օրհասի մէջ հարցնում է իր ծնողին թէ՝ «ինչո՞ւ»։ Երկու դժբաղդ որդիների մէջ մեռնող հայրը իր դիրքով, մարմնի ցաւոտ գալարներով, վզի թեքուածքով, դէմքի արտայայտութեամբ ներկայացնում է մի անհուն տրագիզմ. գուցէ դեռ երբէք ֆիզիքական ցաւն աւելի հզօր կերպով արտայայտված չէ եղել մի տանջվող մարմնի մէջ։ Նա աջ ձեռքով ջղաձգօրէն բռնել է օձի մի օղակը, բարձրացրել է գլխից վեր, ամբողջ մարմինը կծիկ կծիկ է դարձել, երակներն ուռել են իր փրկութեան ճիգի մէջ, մազերն ու միրուքը խոիւ, բերանը ցաւագնօրէն բաց, զգում ես, որ նրա հառաչանքից քարը կարող է ճայթել։ Ամբողջը ներկայացնում է ցաւի գերագոյն արտայայտութիւնը։

Մարդկային մարմնի ֆիզիքական ցաւն ու տանջանքը ներկայացնող այս մարմարէ արձանախմբի առաջ մարդ ինքն էլ քար է կտրում եւ սարսափից ու կարեկցութիւնից մնում է բերանաբաց, ապրում է այդ դժբաղդների ցաւով, կուզէր մի բան անել նրանց փրկելու. միտքը գործում է եւ հնար է մտածում, որ, օրինակ, աւագ որդին կարողանայ իր կիսով չափ օղակից դուրս քաշած ոտքը իսպառ ազատել մահաբեր գալարներից. կուզէր, որ նրա պինդ սեղմէ օձի օղակը, գուցէ սողունը խեղդվի, թուլանայ, կուզէր հազար ու մի բան անել, որ իր նմանն այս անհուն ցաւը մնայ չը տանէր։ Եւ իր անզօրութեան մէջ ըմբոստանալ երկնքի առաջ, մարդ անարդում է այդ անողորմ աստուածութիւնը, որ իր եսասիրութեան մէջ իջել է մինչեւ ամենավատթար չարագործը։

Եւ այս բոլորն ստեղծել է ինքը մարդը։ Նրա դարերի ընթացքում հաւատացել է, որ այդպէս չարաւ է, որ երկինքն իրաւունք ունի այդպէս չարագործ ու խստասիրտ լինել դէպի իր ստեղծագիրը. մարդը հաւատացել է, թէ երկնային օձերը, որոնք աշխարհի չարիքն են ներկայացնում, ճակատագրապէս անհրաժեշտ են իր մարմինը խոցելու համար, որ երկինքն արդար է, որովհետեւ ոյժ ունի, ինչպէս արդար են եւ բոլոր նրանք, որոնք բիւրաւոր խեղճերին արցունք են քամել տալիս, որովհետեւ ոյժ ունեն։ Թէ երկինքը դատարկվի բոլոր աստուածներից, երկիրը բեղմնաւոր եւ նոր բուստ կուրծք ունի նորերն արտադրելու. թող շուտ, խարխափող միտք, երբ պիտի ազատվես։

Ա. Ահարոնեան

...ալովի ֆօնտանը Բիբի-Էյբաթում այնպիսի մեծ քանակութեամբ նաւթ էր արտավիժում, որ այդ հողաբաժնի վրա գտնվող ամբարները եւ պահեստներում այլ եւս տեղ չէր մնացել, որ նաւթով չը լցնվէր։ Ֆօնտանի տէրերը որոշեցին ածել նաւթը դատարկ նաւթարները մէկը, գուցէ եւ այն նպատակով, որ նաւթաղորը մաքրվի եւ սկսէ ֆօնտան խփել, որովհետեւ այդպիսի դէպք պատահել է։ Բայց որովհետեւ էր, որ Զուբալովի ֆօնտանին հաւատարիմ մակերեւոյթի վրա գտնվում էր Բօդչիլդի № 13-որդի նաւթահորը, որովհետեւ այս վերջինն սկսեց ֆօնտան խփել, մինչդեռ առաջ ոչինչ չէր տալիս։

—

ՆԱԽԻՋԵՒԱՆ գիւղից (Կաղզուանի գաւառ) մեզ գրում են. «Մօտերս Նախիջեւանի մերձակայ Ծպնի գիւղում պատահեց մի մարդասպանութեան դէպք, որ առաջացաւ հետեւեալ հանգամանքների մէջ։ Երկու հօրեղբօր որդի միատեղ բնակվում էին՝ մինը կոյր, միւսը առողջ. առողջը վաղուց ամուսնացած էր, իսկ կոյրը անցեալ ձմեռ ամուսնացաւ մի կաղ օրիորդի հետ։ Բայց երկու տագեր կանայքը շարունակ կռուում էին, այս պատճառով թշնամութիւն է ընկնում երկու հօրեղբօր որդիների մէջ։ Ինչպէս պատմում են, լուսաբացին, երբ որ առողջի կինը կանուխ վեր է կենում գործի, օրօրոցում թողնելով երեխան, կոյրը ;օգտվում եւ գտնում է երեխայի բերանը, ձեռքով ամուր փակում է երեխայի շնչառութիւնը եւ մեղնում է։ Դեռ կոյրը ձեռքը երեխայի բերանից չը քաշած, մայրը ներս է մտնում եւ տեսնում, իսկոյն բանը հասկանում է, լալով տեղեկութիւն է տալիս ամուսնուն։ Վերջինս բանը ձեռքին վազում է դէպի տուն կոյրից վրէժ լուծելու եւ պատահելով կոյրին այդ ժամին քարէ սանդուխներով վեր բարձրանալիս դէպի կտուրը, բահի հարուածներով չորս տեղից պատում է կոյրի գլուխը։ Կոյրը մեռած վայր է ընկնում սանդուխներից. այս հարուածները բաւական չը համարելով, մի մեծ քարով օձի նման ջախջախում է նրա գլուխը։ Եկաւ գաւառապետը, տեսաւ, կալանաւորեց սպանողին։ Դործը յանձնվեց քննիչին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՑԻՑ

—

Դրէզդէն, օգոստոսի 8-ին

Գերմանական ընկերութիւն Անատոլիայի գիտնական ուսումնասիրութեան համար

Հինգ օր սրանից առաջ Բերլինի «Hotel de Rome» հիւրանոցում գումարված բազմամարդ ժողովը միաձայն վճռեց հիմնել մի ընկերութիւն, որ պէտք է կրէ հետեւեալ անունը. «Գերմանական ընկերութիւն Անատոլիայի գիտնական ուսումնասիրութեան համար»։ Ինչպէս հաղորդեցին Բերլինի նշանաւոր օրաթերթերը, այդ ժողովին մասնակցել են բազմաթիւ արեւելագէտներ, պատմաբաններ, կառավարչական անձնաւորութիւններ, Բերլինի հասարակական եւ պետական մի քանի հիմնարկութիւնների ներկայացուցիչները, նշանաւոր վաճառականներ եւ այլն։ Ժողովին նախագահել է Հայաստանի եւ Կապադովկիայի յայտնի ուսումնասիրող դոկտոր Վ. Բելք, որ իր՝ այդ մի եւ նոյն ժողովում կարդացած դասախօսութեամբ բացատրել է նորակազմ ընկերութեան նպատակը եւ պարտականութիւնները, որի վերաբերմամբ մենք ցանկանում ենք ներկայ նամակով համառօտ կերպով հետեւեալը հաղորդելու։

Դոկտոր Վ. Բելք, յիշելով գիտնական այն խոշոր ծառայութիւնը, որ Արեւելքի ուսումնասիրութեան համար մինչեւ այժմ արել է գերմանական արեւելագիտական ընկերութիւնը, մի եւ նոյն ժամանակ մատնացոյց է արել գիտնական այն անբաւարար ուսումնասիրութեան վրա, որ եղել է մինչեւ այժմ Անատոլիայի կամ Փոքր-Ասիայի վերաբերմամբ, մի երկիր, որ Բաղդադի մօտիկ ապագայի երկաթուղու շնորհիւ՝ Գերմանիայի համար առաջնակարգ նշանակութիւն է ստանում եւ գիտութեան զանազան ճիւղերի ներկայացուցիչներին աւելի նպաստաւոր պայմաններ մէջ է դնում այդ, գիտական տեսակէտից վերին աստիճանի հետաքրքիր, երկիրը աւելի ցանկալի կերպով ուսումնասիրելու համար։ Նա մի առ մի յիշել է գիտական այն արդիւնքները, որոնք երեւան են եկել իր եւ պրոֆէսսոր Լեմանի առաջնորդութեամբ 1898/99 թ. դէպի Հայաստան կատարած գիտական էկսպէդիցիայի ժամանակ եւ մատնացոյց է արել գիտնական այն գանձերի վրա, որոնք դեռ թաղված են Առաջաւոր Ասիայի շատ երկիրներում ընդհանրապէս եւ Փոքր-Ասիայում կամ Անատոլիայում մասնաւորապէս։ Վերոյիշեալ գերմանական—հայկական էկսպէդիցիայի շնորհիւ՝ Վանի նախահայերի կամ ուրարտիների պատմական եւ կուլտուրական անցեալը բաւական լուսաբանվել է։ Ֆրանսիացի գիտնականներ՝ դը-Մօրգանի եւ հոգեւորական Շէյլի շնորհիւ, ցանկալի կերպով լուսաբանվել է Առաջաւոր Ասիայի մի մեծ տէրութեան պատմութիւնը, որի մասին մինչեւ այժմ գիտութիւնը լռում էր, բայց որը, ինչպէս երեւում է, մի ժամանակ ամբողջ Միջագետքին եւ Ասորիքին տիրել է։ Այդ տէրութիւնը էլաման է իր Սուզա հռչակաւոր մայրաքաղաքով, որի թագաւոր Քեդորլէօմէսի (Աբրահամի ժամանակակից) դէպի Քանանացիների երկիրը կատարած պատերազմական արշաւանքների մասին Աստուածաշունչը բաւական որոշ ու պարզ տեղեկութիւն է տալիս։ Էլամը, որ վերջ ի վերջոյ պարսից լայնածաւալ տէրութեան մի նահանգը դարձաւ, ֆրանսիացի վերոյիշեալ երկու գիտնականների շնորհիւ՝ հնագարեան պատմութեան ուսումնասիրված սեփականութիւնն է դարձել։

Բայց ընդհանուր գիտութիւնը մինչեւ այսօր աւելի քիչ տեղեկութիւններ ունի Անատոլիայի մասին, որ մի ժամանակ արեւելեան եւ արեւմտեան ազգերի համար մի կամուրջի տեղ է ծառայել։ Անատոլիայի նախնական պատմութեան լուսաբանութիւնը մինչեւ 7-րդ դարը (Ք. ծ. ա.) կախված է հեթիթական այն արձանագրութիւնների կարդալուց, որոնցից մինչեւ այժմ գտվել են 40 հատ, բայց որոնց կարդալու բանալին դեռ եւս չէ գտնված։ Դոկտոր Վ. Բելք եւ պրոֆէսսոր Լէմանն էլ դրանցից 3-ը գտել են։ Վերջիններս Թիանայում հեթիթական թագաւորական մի հին կոթող էլ են գտել եւ յանձնել Կ. Պոլսի թիւրքական թանգարանին։ Դոկտոր Վ. Բելք իր դասախօսութեան մէջ շեշտել է եւ հեթիթական—պատմական այն բոլոր աւերակների վրա, որտեղ կարելի է աջողութեամբ պեղումներ անել եւ որոնք իրանց փլատակների տակ գիտութեան համար շատ թանգագին գանձեր են թաքցնում։

Այդ պատմական տեսակէտից հետաքրքիր վայրերից մէկն է Զերաբիսը՝ հնագարեան Պիտրուն կամ Հին Կատակարանի Պաթրը։ Հետեւեալ պատմական շրջանի, այն է 750—550 թ. (ք. ծ. ա.) Անատոլիայի պատմութեան լուսաբանութիւնը կախված է սեպաձեւ արձանագրութիւնների եւ ֆրիւգիական պատմական յիշատակարանների պարզաբանելուց։ Պատմական այդ հետաքրքիր շրջանը ազգերի գաղթականութիւնների եւ իրարանցման ժամանակն է, այն ազգերի, որոնք միմեանց ետեւից ոտնատակ էին անում Փոքր-Ասիան։ Դասախօսը մի առ մի թուել է Անատոլիայի այն բոլոր տեղերը, որոնց մէջ սեպաձեւ արձանագրութիւններ հաւանօրէն շատ կը գտնվեն եւ մի համառօտ տեսութեամբ պարզաբանել է ազգերի գաղթականութիւնները եւ շարժումները Անատոլիայում վերոյիշեալ շրջանում։ Անատոլիայի նախնական բնակիչներին՝ թուրանական ազգերին հետեւում են թրակեան-իլլիւրիական ազգերի խմբին պատկանող ֆրիւգները, որոնցից յետոյ Փոքր-Ասիա են գաղթում հարաւից փիւնիկեցիները, հիւսիսից քիմմերներն եւ արեւմուտքից յոյները։ Գալատիայի Քելտերի ներս խուժելուց յետոյ՝ Փոքր-Ասիա թերակղզին ազատվեց մի քանի դար շարունակ իր մէջ նոր ազգերի գաղթականութիւններ ընդունելուց մինչեւ 1200 թ. (ք. ծ. յ.), երբ տաճկական—թուրանական ցեղերը մտան Անատոլիա, ամբողջապէս իրանց հպատակեցրին այդ նշանաւոր երկիրը եւ հին կլասիքական կուլտուրայի վերջին մնացորդները կործանեցին։ Փոքր-Ասիան էլ մատնվեց միջնադարեան խաւարին եւ բարբարոսութեան։ Բայց չը նայելով այս հանգամանքին, Փոքր-Ասիայում մինչեւ այսօր էլ հին անտիկ ժողովրդական կեանքի շատ մնացորդները նոյնութեամբ մնացել են։ Օրինակ, այսօր էլ Անատոլիայում ցորենը մի եւ նոյն տեսակ են կալսում, հողն այն սիստեմովն են մշակում կամ աղիւսները այնպէս են թրծում, ինչպէս որ հին դարերումն է եղել եւ որոնք արդէն նկարագրված են Աստուածաշունչում։ Բարեբաղդաբար Փոքր-Ասիան աւելի լաւ պայմանների մէջ է գտնվում, քան թէ Բաբելոնն ու Ասորեստանը, որոնց նախնական ազգաբնակութիւնը բոլորովին ոչնչացել է ժամանակի ընթացքում ձուլվելով ուրիշ տարրերի հետ։

Դր. Վ. Բելքի կարծիքով Փոքր-Ասիայում չը պէտք է բաւականանալ միայն պեղումներ անելով եւ պատմական յիշատակարաններ՝ արձանագրութիւններ կամ դրամներ ժողովելով, այլ եւ որ ամենագլխաւորն է՝ պէտք է այնտեղի ժողովրդական ժամանակակից կեանքը ուսումնասիրել։ Մի խօսքով Անատոլիայում ոչ միայն հնագէտը, մարդաբանը, այլ եւ պատմաբանը, աշխարհագրագէտն ու ազգագրագէտը գիտնական ուսումնասիրութեան համար գործելու մեծ ասպարէզ ունեն։ Քանդակագործը, ճարտարապետն ու ինժէնէրը կարող են այնտեղի գեղարուեստական բազմաթիւ յիշատակարանները, ժայռերի մէջ չփված հսկայական բնակարանները, ստորերկրեայ անցքերն եւ ջրանցքները ուսումնասիրել, եւ վերջապէս երկրաբանի եւ հանքաբանի համար Փոքր-Ասիայի մեծ մասը terra incognita է։

Վերոյիշեալ բազմակողմանի տեսակէտներից Անատոլիան ուսումնասիրելն է «գերմանական ընկերութեան Անատոլիայի գիտական ուսումնասիրութեան համար» նորակազմ հաստատութեան նպատակն ու պարտականութիւնը։ Այդ նպատակին հասնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է Անատոլիայի մի քանի մասերում պեղումների ձեռնարկել։ Դր. Վ. Բելքը իր դասախօսութեան վերջում նոյնպէս վերոյիշեալ պեղումների ծրագիրն է նախագծել, որ կարելի է առանց խոշոր ծախքերի իրագործել եւ գիտական զգալի արդիւնքների հասնել։

Ժողովն ընդունել է միաձայն Բելքի առաջարկութիւնն եւ որոշել է Կ. Պոլսի գերմանական դեսպանի միջնորդութեամբ թիւրքաց կառավարութեան թոյլտուութիւնը նախօրօք ստանալ։ Բացի դրանից, որովհետեւ շուտով պէտք է սկսվի Բաղդադի երկաթուղու շինութիւնը, դրա համար ժողովն որոշել է նորակազմ ընկերութեան կողմից այդ գծի շինութեան ժամանակ երկաթուղու վարչութեան տրամադրութեան տակ դնել մի ձեռնհաս հնագէտ, որը գտած հնութիւնները պէտք է ուսումնասիրէ եւ պահպանէ։ Նորակազմ ընկերութեան պատուաւոր նախագահ միաձայն ընտրվել է հռչակաւոր Ռ. Վիրխօվ, իբրեւ ժամանակաւոր նախագահ Դր. Վ. Բելք, իսկ ընկերութեան վարչութեան մէջ մտել են հայերիս լաւ ծանօթ Դր. Լեպսիուս, արեւելագէտ Լէման, հռչակաւոր սեմիտագէտ Դահլման եւ այլն։

Լ. Բաբայեան

ՆԱՄԱԿ ԲՕԼԳԱՐԻԱՑԻՑ

—

Ռուսչուկ, յուլիսի 25-ին

Իմացել էք անշուշտ, որ Ռուսչուկումն էլ գաղթական հայերի մի բոյն կայ. եւ ուր ասես, որ հայը այս վերջին տասնեակ տարիների շրջանում ոտք կոխած չը լինի։ Մարդ արտասահմանում շրջելիս յաճախ հանդիպում է դալուկը այտերին մարդկային արարածների, որոնք կամ նստած են լինում փողոցների անկիւններում եւ կամ խղճուկ խղճուկ վեր վար շրջում՝ մերթ դուրս տալով իրենց բերնից՝ «Եարաբ, դուն գիտես» տխուր ու սրտաճմլիկ յանդերգը։ Սիրտ եմ ուզում, որ դիմանայ, աչք եմ ուզում, որ չարտասվէ սրանց տեսնելով։

Թշուառութեան անողոք ճակատագրի զոհերն են սրանք, որ օտար, սպանիչ մթնոլորտի տակ քարշ են տալիս իրանց խլխլուկ կեանքը։ Եւ իւրաքանչիւրի ճակատին վրա մի տող գիր կայ կնքված, մի խօսք, այլանդակ, զարհուրելի, որը մարդ կարդալիս ամբողջ մարմնով դողում, փշաքաղվում է,—«Կենդանի ողջակէզներ»։ Ահա այդ տող գիրը, որը իր մէջ պարփակում է մի ամբողջ ցեղի պատմութիւն, աւելի լաւ է ասել 20-րդ դարուն սեմին վրա ներկայացված քստմնելի մի կենդանի դրամա։

Գաղթականութեան սոյն վեց տարվայ շրջանում քանի երիտասարդ կեանքեր խամրեցան այս տեղերում, այդ միայն Աստուած գիտէ. Ջահիլ հասակում մէկ էլ նայես փչում է մահուան խորշակը ու զոհը տապալում գետին։ Մեռնում են մէկ մէկի ետեւից անդի անբաւարարութիւնից եւ ցրտից։ Ղարիպութիւն.—կարծես մահ է բուրում այս բառից. չար ոգի մէ, որ խարազանը ձեռին անխղճօրէն հալածում է թշուառ հայաստանցիներին իրանց վաթանից։ Գալիս են երկրից նամակներ տեղւոյս աւադ քահանային. սրտաճմլիկ լաց են լինում, աղերսում, պաղատում որ այս ինչ անձին ողջ կամ մեռած լինելը թէ որ գիտեն իմաց տան իրենց։ Այդ նամակներից շատ քիչերին են պատասխանվում այն պատճառով, որ ենթական վաղուց արդէն մեռած է լինում։

Մեզանում սովորութեան կարգ է անցել մեռածի մասին լուռ մնալ, մի բան չը գրել իր ծնողներին. դրանով կարծում ենք, թէ մի լաւ բան ենք անում, փոխում ենք իրականութիւնը։ Տեղիս հարուստ դասակարգը եւ ինտելիգենցիան լուռ նայում են սառը աչքով. արգահատական մի թռուցիկ խօսք հազիւ դուրս է գալիս իրենց բերնից, երբ մի պանդուխտ հայի դագաղին են հանդիպում։ Ո՞ր մէկ հարուստ կամ ո՞ր մէկ ինտելիգենտ հայ մի օր յաճախեց այն նեղ խոնաւ խուցերը, որոնց մէջ վայրկեան առ վայրկեան առաջաղից մահն է կախ-կիթում։ Սա պարագան ապացուցանում է, թէ մեզանում պարտաճանաչութեան ոգին աղբիւրից է ցամքած։ Հասարակական կենտրոններում խոշոր խոշոր ջարդում ենք, շատ բան անելու տրամադրութիւն ենք ցոյց տալիս, իսկ գործնական կեանքում ծալում ենք այդ ամենը եւ սրբում մեր բերանները։ Ասում եմ, որ եթէ դրսից օգնութեան մի ձեռք չը հասնի այս թշուառներին, շատ չէ՝ մի քանի տարուց յետոյ մենք արտասահմանում կունենանք ոչ թէ պանդուխտ հայեր, այլ անյիշատակ գերեզմանոցներ։

V.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական մինիստրութեան կազմի մէջ, պաշտօնական տեղեկութիւններին նայելով, տեղի են ունեցել հետեւեալ փոփոխութիւնները,—մարկիզ Լօնդօնդէրրի նշանակված է ժողովրդական լուսաւորութեան մինիստր, Բիտշի պետական գանձարանի կանցլէր, Դուգլաս—ներքին գործերի մինիստր, Աուստին Չեմբէրլէն—պօստ եւ հեռագրատների մինիստր, Ջորջ Ռիչմոնդէմ—Իրլանդիայի գործերի քարտուղար։ Անգլիական լրագիրները ընդհանրապէս համակրանքով են խօսում այս փոփոխութիւնների մասին, բայց «Standard» գտնում է, որ այս փոփոխութիւնները մինիստրութեան կազմի մէջ բաւական չեն եւ թէ նրանք կարող են միայն ժամանակաւոր լինել։ «Daily Telegraph» յոյս է յայտնում, որ նշանաւոր փոփոխութիւններ տեսնելու համար երկար չը պէտք է սպասել։ «Times», գովելով Կրանբօրնին, որպէս տաղանդաւոր անձի, այսուամենայնիւ ասում է, որ նա լաւ հռետոր չը լինելով՝ իր տեղումը չէ, իբրեւ արտաքին գործերի մինիստրի օգնական։

—Ինչպէս հաղորդում է «Paris Nounelles» լրագիրը, Պապը յայտնել է Եւրոպայի կաթոլիկ վեհապետներին, որ նա այսուհետեւ թոյլտութիւն չի տայ այնպիսի ամուսնութիւնների համար, որոնք կատարվում են մօտ ազգականների մէջ։ Պապը խորհուրդ է տալիս կաթոլիկ վեհապետներին ամուսնացնել իրանց որդոց ոչ արքայական պրինցների եւ պրինցուհիների հետ, որպէս զի այդպիսով Եւրոպայի կաթոլիկ արքայական տները խուսափեն մտաւոր եւ ֆիզիքական այլասերումից, որը յաճախ առաջ է գալիս մօտ ազգականների մէջ տեղի ունեցող ամուսնութիւններից։ Լեւոն XIII-որդի այս որոշումը շատ բացատրութիւնների տեղիք է տալիս եւրոպական մամուլի մէջ, որովհետեւ ամուսնութիւնները արենակից անձերի մէջ սովորական երեւոյթ են Արեւմուտքի արքայական տների մէջ, մանաւանդ Օրլէանների ընտանիքում։

—Ս. Մարկոսի զանգակատան կործանումից յետոյ, որ տեղի ունեցաւ մօտ մի ամիս առաջ, ըստ երեւոյթին, նոյն վիճակն է սպառնում Վենետիկի գեղարուեստի եւ միւս յիշատակարաններին։ Ս. Մարկոսի եկեղեցու մէջ եւս, որտեղ գտնվում է «Ահեղ դատաստան»-ի նշանաւոր մօզայիկ պատկերը, նկատված են ճեղքվածքներ։ «Santa Maria Mater Domini» եկեղեցուց դուրս են տարված Տիտսիանոյի պատկերները, որովհետեւ եկեղեցին մօտ է փուլ գալուն։

—Ֆրանսիական մինիստր-նախագահ Կօմբ մօտ օրերումս մի ունկնդրութիւն ունեցաւ հանրապետութեան նախագահ Լուբէի մօտ եւ հաղորդեց նրան, թէ ինչ միջոցներ նա անհրաժեշտ է համարում ձեռնարկել մօտիկ ապագայում հոգեւոր ուսումնարանների փակման առիթով բողոքողների դէմ։ Արդարադատութեան մինիստրը պահանջում է գործ դնել ամենախիստ պատիժներ այն անձանց վերաբերմամբ, որոնք յանդգնում են պոկել փակված ուսումնարանների կնիքները եւ ընդհանրապէս դիմադրութիւն ցոյց տալ ոստիկանական գործակալներին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

3 օգոստոսին

ԲԵՐԼԻՆ։ Լրագրական տեղեկութիւններով Պոզնանում կատարվելիք զօրամարզութիւններին պէտք է ներկայ գտնվեն Վարշավայի գեներալ-նահանգապետն եւ 50 ռուս օֆիցերներ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Նահանգապետը առաջարկեց նահանգական զէմստվոյի ժողովին հոգ տանել միջոցներ ձեռք առնելու՝ Արզամասի գաւառի ազգաբնակութեան դրութիւնը թեթեւացնելու համար, ի նկատի առնելով տեղական երկաթի գործարանների փակումը։ Ժողովը ընդունեց ուպրավայի զեկուցումը հասարակական աշխատանքներ կազմակերպելու մասին եւ որոշեց խնդրել կառավարութիւնից 150,000 ռուբլի այդ աշխատանքների համար։

4 օգոստոսի

ԼՕՆԴՕՆ։ Գօրտսմուտ հասան բօէրական գեներալներ Բօտա, Դէվէտ եւ Դէլարէյ. նրանք ժամանակաւորապէս կանգ չառան Սօուտհամպտոնում, այլ իսկոյն ճանապարհ ընկան Լօնդօն, ապա նրանք նստան «Նիգերիա» նաւը, որտեղ նրանց ողջունեց Կիտչեներ եւ ներկայացրեց Ռօբերտսին եւ Զեմբէրլէնին։

ՍՕՖԻԱ։ Նախկին մակեդոնական կօնգրէսի հակառակորդների միութիւնը կը ժողովվի օգոստոսի 4-ին երկրորդ կօնգրէսի բացման համար։ Նոր կօնգրէսին մասնակցելու կը գան 60 պատգամաւորներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խարկովի նահանգապետի կեանքի դէմ արած ապանութեան փորձի մասին Թագաւոր Կայսրին զեկուցանելուց յետոյ՝ Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց արժանացնել շտաբմէյստէր Իշխան Օբօլենսկուն հետեւեալ հեռագրին. «Անկեղծ շնորհաւորում եմ ձեզ մահաբեր վտանգից ազատվելու համար, շնորհակալութիւն եմ յայտնում Աստուծուն, որ պահեց ձեր կեանքը, եւ բարձր գնահատում եմ ձեր հաւատարիմ եւ անձնազոհ ծառայութիւնը Ինձ եւ հայրենիքին»։

Ֆինանսների մինիստրութիւնից յայտարարվում է, որ ռուսահպատակների պահանջները չինական կառավարութիւնից այն վնասների համար, որ պատճառել են 1900 թուին տեղի ունեցած անկարգութիւնները, քննվեցին Պեկինի դեսպանատան կողմից. այն պահանջները, որոնք ճանաչված են կանոնաւոր, բաւարարութիւն կը ստանան 1902 թուի ռուսական պետական 4%-աբեր փոխառութիւնից։ Այն անձինք, որոնց վճռված է վարձատրութիւն տալ, պէտք է յայտարարութիւն ներկայացնեն Ֆինանսների մինիստրութեան ընդհանուր դիւանատանը։

ՏԵԱՆՋԻՆ։ Օգոստոսի 3-ին տեղի ունեցաւ Տեանձինի յանձնումը չինական իշխանութիւններին։

5 օգոստոսին

ՄՕՍԿՎԱ։ Կայացաւ այն հիւանդանոցի հիմնարկութիւնը, ուր պէտք է զետեղվեն անբուժելի հիւանդները եւ որ չինվում է Մեդվեդնիկովայի միջոցներով։ Մեդվեդնիկովա կոչակել է այդ հիւանդանոցի համար մօտ երկու միլիոն րուբլի։

ԿԱՐՍ։ Երաշտը, կարկուտը եւ ցրտերը սաստիկ պակասեցրին բերքի արդիւնքը։ Կարկուտի եւ ցրտերի պատճառած վնասը 80,000 րուբլուց աւելի է։

ԼԱՆԴԷՐՆՕ։ Այստեղ հաւաքվում են զօրքեր։ Պոնկրուայում ոստիկանական գործակալը ծեծի ենթարկվեց կանանց կողմից։

ԼՕՆԴՕՆ։ Բօէրական գեներալների գալը տեղիք տուեց ազդու ցոյցերի։ Բազմաթիւ ամբոխը ջերմ կերպով ողջունում էր նրանց կայարանում. լսվում էին այսպիսի աղաղակներ. «Բարի ծեր Դէվէտը եւ բոլոր նախկին քաջ թշնամիները այժմ մեր բարեկամներն են»։ Ամբոխը այնպէս սեղմեց Դէվէտին, որ ոստիկանութիւնը ստիպված էր ազատել նրան։ Գեներալները ստիպված էին անցնել գնացքի ետեւը, որպէս զի կարողանան դուրս գալ կայարանից։ Ամբոխը հետեւում էր նրանց եւ ուղեկցում էր կառքը։ Օգոստոսի 4-ին բօէրական գեներալները ուղեւորվեցին Կոուզ այցելելու թագաւորին նրա զբօսանաւի վրա՝ նրա հրաւէրով։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ՎԱՐՈՆ. Թողանեան. Ձեր անունով խմբագրութեան մէջ ստացված է 111 րուբլի, կարգադրեցէք յետ ստանալու։

*** Յովհաննէս Պապովեանց. Ցայտնեցէք, թէ որտեղ էք ստանում «Մշակ»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑՈՒՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բաքու շաբաթը մէկ անգամ ուրբաթ օրերը դուրս է գալիս առաւօտեան 10 ժամ 15 րոպէ. (11 ժ. 49 ր.), հասնում է Բաքու գիշերվայ 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին)։

Արագ գնացք Բաքուից—Թիֆլիս դուրս է գալիս ուրբաթ օրերը գիշերվայ 12 ժամ 52 րոպէ (1 ժ. 50 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 2 ժ. 45 ր. (3 ժ. 43 ր.)։

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 5 ժ. 2 ր. (6 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.)։

Պօստատար գնացք Բաքուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), դուս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 5 ժ. 40 ր. (6 ժամ 38 րոպէին)։

Մարդատար գնացքը Բաքուից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.)։

Պօստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.), հասնում է Բաքու առաւօտեան 6 ժ. 16 ր. (7 ժ. 14 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 24 ր. (8 ժ. 22 ր.), հասնում է Բաքու ցերեկվայ 12 ժ. 5 ր. (1 ժ. 3 ր.)։

Պօստատար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.). հասնում է Սանահին 1 ժ. 35 ր. (2 ժ. 33 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 3 ժ. 32 ր. (4 ժ. 30 ր.), Ալէքսանդրոպոլ առաւօտեան 7 ժ. 17 ր. (8 ժ. 15 ր.), Կարս ցերեկվայ 11 ժ. 1. (11 ժ. 59)։

Պօստատար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.), Ղարաքիլիսա 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.)։

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրոպոլ գիշերվայ 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.)։

Խառն գնացք Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս առաւօտեան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.) և Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 ր.)։

Սրանից մի 5—6 ամիս առաջ, «Մշակի» միջոցով բաժանորդագրութիւն էի բացել հանգուցեալ Դաւիթ Տէր-Դաւթեանի «Ճարահատեալ դերասան» փոխադրած վոդեվիլի համար։ Բաժանորդներ եղան։ Ես, տեսնելով որ գրքի տպագրութիւնը շատ պիտի ուշանայ ինձանից անկախ պատճառներով, բաժանորդներին թիւրիմացութեան տեղիք չը տալու համար, բոլոր բաժանորդներին մի ամսվայ ընթացքում յետ ուղարկեցի իրանց բաժանորդագները պօստի միջոցով, որոնց բոլոր ստացականները ինձ մօտ են, այնպէս որ ոչ ոք մեզանից ստանալիք չունի։ Սրանով դիմում եմ, որ եթէ կան իսկապէս այնպիսիները, որոնք մինչեւ այժմ ինձանից՝ այդ գրքի վերաբերմամբ ոչ մի պատասխան չեն ստացել, խնդրում եմ պահանջել ինձնից փողերը։

1—1 Հայրապետ Բաբուրեանց

Ստացված են Անգլիական ԻՆԿՈՒԲԱՏՈՐՆԵՐ

G. Wallin et K°.

Մեքենաներ արհեստական կերպով ձուերից ճուտ հանելու համար։ Անհրաժեշտ է ամեն մի գիւղատնտեսի եւ թռչնապահի համար։ Տեղեկութիւնները եւ գները հաղորդվում են ըստ պահանջման։

Գլխաւոր ներկայացուցիչ Կովկասի համար՝
Исаакъ Мирза-Аваковъ. БАКУ.
2—6

ԱՐՄԵԱՆՍԿԻ ՀԱՅՈՑ ՄԻԴԱՍԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Հայոց լեզուի եւ երգեցողութեան համար, շաբաթական 18 դասով, որը նաեւ պարտաւորութիւն կունենայ մասնակցել պատարագի երգեցողութեանը (դպրութիւն անել առանց խմբի)։ Ռոճիկ 400 րուբլի։

Դիմել՝ Армянскъ, Тавр. губ. Попечителю Г. Г. Альянаки. 2—5

Վկայեալ Ճարտարապետ

կը խնդրէ պաշտօն օգնական ճարտարապետի կամ Dessinateur-ի, շինարարական մասնաւոր ընկերութեանց մէջ եւ կամ ճարտարապետի մօտ։

Խորին յարգանքով՝ Կարօ Պալեան

Հասցէն՝ Garo Balian. Architecte. SOFIA, Bulgarie. 4—4

ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՅԱՐ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

(XI-րդ տարին իր գոյութեան)

Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ, ցերեկօթիկ (полупансіонеръ) եւ երթեւեկ բոլոր պետական միջնակարգ դպրոցները մտնելու համար։ Վարժարանում աւանդվում են ընդհանուր կրթական առարկաներից՝ նաեւ կրօն-բարոյախօսութիւն, հայոց, ֆրանսերէն ու գերմանական լեզուներ հմուտ ուսուցչուհիների եւ ուսուցիչների ղեկավարութեամբ՝ թէ գործնական եւ թէ տեսական կերպով։ Վարժարանում այս տարվանից կընդունվեն նաեւ իբրեւ գեշերօթիկներ՝ կրկնողութեամբ հանդերձ (съ репетиціей) այնպիսի գաւառացի աշակերտներ, որոնք ուսանում են Թիֆլիսի կառավարչական բոլոր դպրոցներում։ Ցատկապատրաստվում են աշակերտներ Թիֆլիսի նորաբաց կայսերական գեղարուեստական դպրոցի համար՝ ծրագրի համապատասխան։ Զրիավարժ չքաւոր աշակերտներ ընդունվում են բարեկամների ցուցմամբ։

1—6 Վարժարանի կառավարիչ՝ Յ. Ղարագեօզեան

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».

12/25-ին օգոստոսի, մեկնելու է Բաթումից, ցերեկվայ ժամը 11-ին, «Tigre» շոգենաւը հանդիպելով՝ Նօվօրօսիյսկ, Կ. Պոլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր եւ Լօնդրա։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչեւ Պարիզ, նոյնպէս եւ մինչեւ Շանղայ (Զինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակացրած գներով։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին՝ հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել Ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում, № գրասենեակը. հեռախօս № 608։ Գրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ եւ 5—7-ը կոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմոնտովսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը ստացած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնադրին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն։ Դասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն նաեւ առտեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի

Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս կուրսերի հիմնադրի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (Ե.) 7—12

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԿՈՒՐՍԵՐ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առեւտրական, գործարանական եւ նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից լաւագոյն է դատված եւ իբրեւ օժանդակ ձեռնարկ առեւտրական դպրոցներում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու տարի անձանց՝ գործնական ձեւով հաշուապահութիւն 4 ամսում, պատրաստութեամբ, եւ հարկաւոր դէպքում՝ յանձնարարականով

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, նաեւ նաւթարդիւնաբերական եւ նաւթագործական հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն։
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Մուրհակային եւ առեւտրական օրէնքներ։
5) Վայելչագրութիւն եւ ուղղագրութիւն ամենավատ ձեռագրի։

Ընդունելութիւն ամեն օր։ Պարապմունքները սկսվում են 1902 թուի Սեպտեմբերի 15-ից պարբերաբար ամեն 4 ամիս, ամենայն օր ճաշից յետոյ՝ 60 րուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում է, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, վկայագիր։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիս ում, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիր ուղարկվում է ձրի։

Վերեւում յիշված ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ ԳԻՆՆ է 3 ր. 50 կոպէկ։ (Կ. Ե. Հ. Շ.) 15—35

БУХГАЛТЕРСКІЕ КЛАССЫ,

учр. И. Я. Бронъ-фонъ-Бреннеромъ.

Въ прошломъ году **ОКОНЧИЛО** курсъ **106**: женкаго пола 43 и мужскаго пола—63. При классахъ имѣется **библіотека· товаро-технол. музей** и **бюро** для исполненія практическихъ работъ.
полнеeія практическихъ работъ.

Въ настоящемъ году для чтенія лекцій приглашены лучшіе спеціалисты, именно: инж. *М. И. Ченгеры*, инж. *Г. Я. Дюковъ*, юристъ *В. А. Москаловъ*, засл. пр. *П. С. Левицкій*, препод. ср. уч. зав. *Э. К. Ліозенъ*, *Ю. Ф. Гурмлинъ*, *С. Е. Козловъ* и др.

Обязат. предметы классовъ:

бухгалтерія, банковое дѣло, коммерческая ариѳметика, ариѳметика на счетахъ, технологія, товаровѣдѣніе, корреспонденція, каллиграфія, торговлезнаніе, торговые законы и **для желающихъ**: иностр. языки стенографія, упражненія на пишущей машинѣ.

По окончаніи выдаются **АТТЕСТАТЫ** и лучшимъ учащимся предоставляются **мѣста службы**.

Плата за весь курсъ 60 руб. Курсъ продолжается 5 мѣс. при ежевечернихъ, съ 5-ти до 8-ми ч. веч. занятіяхъ. Принимаются лица ОБОЕГО ПОЛА.

Программы и условія поступленія выдаются безплатно въ канцеляріи классовъ, **Николаевская, 88**, съ 9 до 1 ч. и съ 5 до 8 ч. веч.

Начало занятій съ 10-го сентября. Число вакансій **ограниченное**. Двѣ **безплатныя** вакансія свободны.

Учредитель классовъ *И. Бронъ-фонъ-Бреннеръ*
Квартира: Михайловскій пр., № 71. 6—15

Дозволено Цензурою, Тифлисъ, 5 Августа 1902 г.

Электропечатная Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.